ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2022, № 1, 38-51 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2022.13.1.038

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Դավադրապաշտական տեսությունները ակադեմիական միջավայրում արդարացիորեն բացասական համբավ ունեն: Տարածված տեսակետի համաձայն՝ դավադրապաշտական տեսությունների իմացաբանական թերարժեքությունը աղճատում է սոցիալ-քաղաքական իրականության ադեկվատ պատկերացումը: Սակայն իմացաբանական թերարժեքությունը ժողովրդավարական հասարակություններում բարոյագիտական տեսանկյունից չի կարող բավարար փաստարկ լինել նման տեսությունների տարածումը կանխարգելելու համար, քանի որ այդ դեպքում անհրաժեշտ կլիներ կանխել նաև իմացաբանական տեսանկյունից թերարժեք այլ տեսությունների տարածումը (ինչպես օրինակ՝ կրոնական և այլ ուսմունքները): Միևնույն ժամանակ տարածված է այն տեսակետը, որ քաղաքական դավադրապաշտական տեսությունների տարածումը սպառնում է ժողովրդավարական հասարակություններին, քանի որ դրանք հասարակության անդամների մեջ նվազեցնում են վստահության ընդհանուր մակարդակը իշխանությունների և պետական հաստատությունների նկատմամբ: Ուստի մենք ողջախոհ այլ փաստարկների կարիք ունենք: Հոդվածում առաջադրված է այն տեսակետը, որ քաղաքական դավադրապաշտական տեսությունների բարոյական տեսանկյունից անընդունելիությունը և վերջիններիս՝ ժողովրդավարական սկզբունքներին սպառնալիք լինելը կարող են լինել նման տեսությունների կանխմանն ուղղված քաղաքականությունն արդարացնելու բավարար փաստարկներ: Այդպիսով՝ հիմնականում քաղաքական դավադրապաշտական տեսությունների բարոյական թերարժեքությունն է պետությանը և հասարակությանը օժտում «բարոյական իրավունքով» նման տեսությունների տարածման դեմ քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար:

Բանալի բառեր – *դավադրապաշտական տեսություն, քաղաքական դավադրապաշտական տեսություն, համապարփակ դավադրապաշտական տեսություն, ժողովրդավարություն, իմացաբանական թերարժեքություն, բարոյական թերարժեքություն*

Փաստահեն քաղաքականությունը ժամանակակից զարգացած ժողովրդավարական հասարակություններում դիտվում է քաղաքական կառավարման արդյունավետության կարևոր գրավական: Այդ է պատճառը, որ նման հասարակություններում կարևորվում է նաև քաղաքական-իմացաբանական խնդիրների ուսումնասիրությունը: Քաղաքական իմացաբանությունը համեմատաբար նոր ձևավորված փիլիսոփա-

յական գիտակարգ է, սակայն, անշուշտ, ճշմարտությանը, գիտելիքի արժանահավատությանը և ընդհանրապես ճանաչողությանը վերաբերող իմացաբանական հարցերը ամենևին էլ նոր ձևակերպված խնդիրներ չեն. դրանք այնքան հին են, որքան փիլիսոփայությունը: Սակայն արդի աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների համընդգրկունության, խոսքի ազատության և տեղեկատվության տարածման ինտենսիվացման, այսպես կոչված «հիբրիդային պատերազմների» և սոցիոմշակութային մի շարք այլ երևույթների ի հայտ գալուն զուգահեռ՝ հանրային կյանքում տարածվող տեղեկատվության ճշգրտության և վերջինիս նկատմամբ բարոյական դիրքորոշում ձևակերպելու խնդիրները առավել քան կարևոր են դարձել: Դրանց շարքին են դասվում նաև մի շարք օբյեկտիվ (կորոնավիրուս, տարածաշրջանային պատերազմներ և այլն) և սուբյեկտիվ (քաղաքական, տնտեսական և այլն) պատճառներով հայաստանյան մեդիատիրույթում բավականին տարածված դավադրապաշտական տեսությունների (այսուհետ՝ ԴՏ) իմացաբանական և բարոյագիտական հայեցակետերին առնչվող խնդիրները: Մասնագիտական գրականությունում ԴՏ-ները դիտվում են որպես սոցիալ-քաղաքական իրականությունը նկարագրող այնպիսի տեսություններ, որոնք իմացաբանական տեսանկյունից ապաբանական և մոլորեցնող են, բարոյական առումով անազնիվ են և չարամիտ, իսկ սոցիալ-քաղաքական տեսանկյունից սպառնալիք են ժողովրդավարությանը, համերաշխ համակեցությանն ու հասարակական միասնականությանը: Այդ է պատճառը, որ զարգացած ժողովրդավարական մի շարք հասարակությունների ինչպես ակադեմիական, այնպես էլ պետական շրջանակները միջոցներ են փնտրում ԴՏ-ները բացահայտելու և դրանց տարածումը կանխելու համար:

Եթե ԴՏ-ների իմացաբանական թերարժեքությունը սոցիալ-փիլիսոփայական և քաղաքական-փիլիսոփայական գրականությունում ընդունվում է գրեթե միանշանակորեն, ապա դրանց տարածումը կանխելու պետական քաղաքականությունը կամ հասարակական որոշակի շրջանակների միջամտությունը բարոյագիտական տեսանկյունից մի շարք հարցեր և խնդիրներ է առաջացնում: Հատկապես երբ հաշվի ենք առնում այն իրողությունը, որ ԴՏ-ների իմացաբանական թերարժեքությունը, որոշ մեկնաբանությունների համաձայն, ամենևին էլ չի հիմնավորում նաև վերջիններիս ապաբանական լինելը: Բանն այն է, որ որոշ դեպքերում ԴՏ-ները կարող են կատարել սոցիալ-քաղաքական անհասկանալի և անծանոթ իրադարձությունների «բանականացման» գործառույթ: ԴՏ-ների միջոցով հաճախ քննվում են սոցիալ-քաղաքական այն իրադարձությունները, որոնք բնույթով անորոշ են, անհասկանալի և կարիք ունեն որոշակի մեկնաբանության[1]: Եվ «դավադրա-

[1] Տե՛ս **Bratich J.Z.**, Conspiracy Panics: Political Rationality and Popular Culture, Albany: State University of New York Press, New York, 2008, էջ 6:

պաշտական մտածողությունը» հաճախ լրացնում է սոցիալ-քաղաքական իրողությունների մասին ամբողջական, համապարփակ տեղեկատվության բացակայությունը կամ պակասը, որի պայմաններում ԴՏ-ները հաճախ հասկանալի և ընկալելի են դարձնում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական գործընթացները: Շատ ավելի հաճախ սոցիալ-քաղաքական իրականության բանականացման գործառույթները ԴՏ-ներն իրականացնում են ճգնաժամային պայմաններում: Պատահական չէ, որ ԴՏ-ների նկատմամբ վստահությունը հատկապես ամրապնդվում է պատերազմների, բնական և տեխնածին աղետների, քաղաքական, տնտեսական կամ սոցիալական ցնցումների ժամանակ[2]:

Այնուամենայնիվ, մասնագիտական գրականությունում ԴՏ-ներն առավելապես համարվում են «վնասարար» տեսություններ, որոնց դեմ պետական քաղաքականության մշակումը բարոյագիտական հիմնավորման կարիք ունի: Բանն այն է, որ ԴՏ-ների կանխարգելմանն ուղղված պետական համակարգի լծակների անզգուշորեն օգտագործումը կարող է սպառնալ խոսքի կամ կամարտահայտման ազատությանը, կարող է իրական հիմքեր ստեղծել դրա քողի տակ տվյալ իշխանությունների համար անհարմար կամ ընդդիմադիր ուժերին ճնշելու, լռեցնելու համար: Խոսքի, կամարտահայտման ազատությունը, իշխանությունների գործունեությունը ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության միջոցով վերահսկելու հնարավորություններն ու իրավունքները հասարակական կյանքի՝ ժողովրդավարական քաղաքական կազմակերպման անկյունաքարային սկզբունքներ են, որոնց ոտնահարումը կարող է ավտորիտար իշխանական համակարգի կայացման իրական հիմքեր ստեղծել: Ուստի հարց է առաջանում, թե սոցիալ-քաղաքական որ դեպքերում և բարոյագիտական ինչ հիմնավորմամբ պետք է պետական կամ ոչ պետական հաստատությունները դիմակայեն ԴՏ-ների տարածմանը: Այսինքն՝ անհրաժեշտ է գտնել բարոյագիտական այնպիսի բանաձև, որը հնարավորություն կտա կանխելու սպառնալից և վնասարար ԴՏ-ների տարածումը՝ միևնույն ժամանակ չվնասելով խոսքի և կամքի ազատ արտահայտմանը: Այս հարցերին պատասխանելու և ըստ էության բարոյագիտական խնդիրները լուծելու համար նախ հարկավոր է հստակ սահմանել, թե ինչ է ԴՏ-ն, դրա ինչ տեսակներ կան, ինչով են դրանք վտանգավոր, այնուհետև պատասխանել՝ որ դեպքերում հասարակական կամ պետական հաստատությունները «բարոյական իրավունք» ունեն ծավալելու ԴՏ-ների տարածման դեմ ուղղված քաղաքականություն:

Իմացաբանական տեսանկյունից ԴՏ-ների սահմանումը հաճախ խնդրահարույց է: Խնդիրն այն է, որ դավադրության մասին պատմող ամեն մի տեսություն չէ, որ դավադրապաշտական է: Պատմագիտա-

[2] Տե՛ս **Van Prooijen J-W**., **Douglas K.M**., Conspiracy theories as part of history: The role of societal crisis situations. Memory studies, 10 (3), 2017, էջ 323-333:

կան, քաղաքագիտական և գիտական այլ գրականությունից մեզ հայտնի է, որ պատմության ընթացքում եղել են բազմաթիվ դավադրություններ: Դավադրությունը արդի հայերենի բացատրական բառարանում սահմանվում է որպես՝ «մի քանի (կամ շատ) մարդկանց գաղտնի համաձայնություն՝ քաղաքական նպատակներով միատեղ գործողություններ կատարելու՝ մի մարդու կամ իշխանության դեմ»[3]: Սահմանումից պարզ է դառնում, որ մի խումբ մարդկանց կողմից քաղաքական նպատակներով ոչ բոլոր համաձայնությունները կարելի է կոչել դավադրություն: Տվյալ համաձայնությունը պետք է բավարարի առնվազն երեք պայմանի. ա) դավադիրների պայման (պետք է լինի ինչ-որ ծրագրի շրջանակներում համախմբված մարդկանց խումբ), բ) գաղտնիության պայման (դավադիրները պետք է գաղտնի պահեն կամ չհանրայնացնեն իրենց դավադիր նպատակները), գ) նպատակի պայման (պետք է լինի ինչ-որ նպատակ, որի իրականացման շուրջ համախմբած են դավադիրները)[4]:

Դավադրություն հասկացության սահմանումից ակնհայտ է, որ հեղաշրջումներով, պատերազմներով, ահաբեկչություններով հարուստ մարդկային պատմության ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ իրադարձություններ, որոնց կարելի է կոչել դավադրություն: Եվ բնական է, որ մարդկային ճանաչողությունը չէր կարող անտարբեր մնալ այդ երևույթների նկատմամբ, ուստիև տեսաբանները ձևակերպել և հանրությանն են ներկայացրել դավադրությունների մասին պատմող բազմաթիվ տեսություններ: Իրականում այդ դավադրությունների մասին տեսությունները պետք չէ դիտարկել մտացածին և հաճախ անհեթեթ դավադրապաշտությունների հետ իմացաբանական հավասար հարթությունում: Իմացաբանական տեսանկյունից խնդիրը դավադրությունների մասին պատմող տեսությունների և ԴՏ-ների (դավադրապաշտական տեսությունների) սահմանազատումն է: Դավադրապաշտության վերաբերյալ փիլիսոփայական-իմացաբանական գրականության մեծ մասը նվիրված է նշված խնդրի ուսումնասիրությանը:

Մասնագիտական գրականությունում որպես դավադրության մասին տեսության և ԴՏ-ի տարբերակման հիմնական հատկանիշ նշում են այն հանգամանքը, որ եթե դավադրության մասին պատմող տեսությունը ըստ էության գիտական է, որը ներկայացնում է իրականում տեղի ունեցածը, կամ առնվազն ենթադրաբար տեղի ունեցածի մասին փաստարկները կառուցում է գիտական տեսություններին բնորոշ մեթոդների վրա, ապա ԴՏ-ն տեսություն է, որը պատմում է մտացածին կամ կեղծ դավադրության մասին, և որի փաստարկման մեթոդները հաճախ գիտական չեն:

---

[3] https://bararanonline.com/%D5%A4%D5%A1%D5%BE%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, հղումը հասանելի է 05.04.2022:

[4] Տե՛ս **Dentith M. R. X.**, The Philosophy of Conspiracy Theories, Palgrave Macmillan, New York, 2014, էջ 23:

Ըստ բրիտանացի տեսաբան Ք. Քասսամի՝ ԴՏ-ներին բնորոշ է մտահայեցողականությունը, սիրողականությունը, խորհրդավորությունը, հակադրվողականությունը և նախաարդիությունը[5]: Ասվածին կարելի է ավելացնել նաև ԴՏ-ների գաղափարական հետևյալ բաղադրիչները՝ քաղաքականության «մաքիավելիական» ըմբռնումը, «մենք-նրանք» հակադրությունը, էլիտաների կամ իշխանությունների հրեշացումը, սոցիալ-քաղաքական գործընթացների «առասպելականացումը»[6]: Հարկ է նկատել, որ հիշյալ գաղափարական բաղադրիչները բնորոշ են նաև պոպուլիստական տեսություններին: Այս ընդհանրությունները նկատի ունենալով՝ ամերիկացի քաղաքագետ Մարկ Ֆենստերը գտնում է, որ ԴՏ-ները «ազդեցության մասին պոպուլիստական տեսություններ» են[7]:

Ընդունված մոտեցման համաձայն, եթե որևէ իրողության մասին պատմող տեսությունը ներկայացնում է իրականում տեղի ունեցածը, եթե այն հավաստի է, հիմնավոր է, օբյեկտիվ է և ճշգրիտ, ապա իմացաբանական տեսանկյունից տեսությունը թերարժեք չէ: Վերը նշված նկարագրությունից ակնհայտ է, որ ԴՏ-ն, ի տարբերություն դավադրության մասին պատմող տեսության, ներկայացնում է ոչ թե իրականում տեղի ունեցած դավադրությունը, այլ «մտացածին» դավադրությունը կամ այնպիսի դավադրություն, որի հավաստիությունը, հիմնավորվածությունը, ճշգրտությունը և օբյեկտիվությունը ապացուցված չեն: Ուստի ԴՏ-ները իմացաբանական տեսանկյունից թերարժեք տեսություններ են:

Սակայն արդյո՞ք իմացաբանական տեսանկյունից թերարժեքությունը անհրաժեշտ և բավարար հիմք է պետական հաստատությունների համար ԴՏ-ների տարածումը կանխարգելող քաղաքականություն մշակելու: Չէ՞ որ սոցիոմշակութային իրականությունը լի է աշխարհը մեկնաբանող բազմաթիվ տեսություններով, որոնք իմացաբանորեն թերարժեք են, բայց որոնց առկայությունը կամ տարածումը պետական հաստատությունների և անգամ մասնագետների կողմից խնդրահարույց չի համարվում, երբեմն անգամ խրախուսվում է այդ թերարժեք տեսությունների գաղափարաբանության վրա կառուցված հաստատությունների գործունեությունը: Ցցուն օրինակ են կրոնական տեսությունները և այդ տեսությունների գաղափարաբանության քարոզով զբաղված կրոնական հաստատությունները: Այս հոդվածի շրջանակներում մենք չենք ծավալվի կրոնական տեսությունների իմացաբանական թերարժեքության հիմնավորման շուրջ, քանի որ նախ նման

[5] Տե՛ս **Cassam Q.,** Conspiracy theories. Polity Press, Cambridge, 2019, էջ 3-20:

[6] Առավել մանրամասն տե՛ս **Լ. Գ. Բաբաջանյան**, Պոպուլիզմի և դավադրապաշտական տեսության գաղափարական բաղադրիչները, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2021, № 2 (35), էջ 31-43:

[7] Տե՛ս **Fenster M.**, Conspiracy Theories: Secrecy and Power in American Culture. University of Minnesota Press, Minneapolis, 2008, էջ 89:

խնդիր դրված չէ մեր առջև, այնուհետև դրան նվիրված մեծաքանակ գրականություն կա։

Կրոնական ուսմունքների և ԴՏ-ների համեմատական վերլուծության համատեքստում ավստրիացի հայտնի փիլիսոփա Կարլ Պոպպերը զուգահեռներ է անցկացնում ԴՏ-ների և կրոնական ուսմունքների միջև։ Ըստ նրա՝ ԴՏ-ները «թեիզմի տեսակ» են, որոնք տարածում են գտել Աստծո գոյության նկատմամբ հավատի նվազման համատեքստում «աստվածայինի» նկատմամբ հավատի բացը լրացնելու համար, այլ կերպ ասած՝ «աստվածային» ամենակարողության փոխարեն մարդիկ սկսել են հավատալ ինչ-որ հզոր դավադիրների ամենակարողությանը[8]։ Կրոնական տեսությունների և ԴՏ-ների միջև համեմատական վերլուծությունների կարող ենք հանդիպել նաև այլ հեղինակների աշխատություններում։ Խնդրին անդրադարձած գրեթե բոլոր տեսաբանները այս կամ այն կերպ նկատում են, որ երկու տեսակի տեսություններն իմացաբանական տեսանկյունից թերարժեք են։

Սակայն, եթե պետության՝ կրոնական ուսմունքների տարածումը կանխարգելելուն ուղղված քաղաքականությունը ժողովրդավարական հասարակություններում ոչ միայն չի խրախուսվում (բացառությամբ այն դեպքերի, երբ կրոնական ուսմունքը որևէ քաղաքացու կյանքի, առողջության կամ գույքի համար սպառնալիքներ է պարունակում), այլև շատ դեպքերում պետության նմանօրինակ քաղաքականությունը կարող է դիտվել որպես ժողովրդավարական պետությունների բազմաթիվ սահմանադրություններով, միջազգային համաձայնագրերով և օրենքներով ամրագրված խղճի ազատության դեմ ուղղված գործունեություն (այդ թվում նաև ՀՀ-ում[9])։ Բարոյական կամ իրավական նորմի ընդհանրության պահանջից և տրամաբանական հետևողականությունից ելնելով՝ հարց է առաջանում, թե ինչու ժողովրդավարական պետությունը չի կարող խոչընդոտել կրոնական ուսմունքների տարածումը, իսկ ԴՏ-ների տարածումը պետք է և որոշ տեսաբանների պնդումների համաձայն՝ նույնիսկ անհրաժեշտ է խոչընդոտել։

Բանն այն է, որ ոչ բոլոր ԴՏ-ներն են համարվում սոցիալ-քաղաքական տեսանկյունից «վտանգավոր»։ Բարոյագիտական տեսանկյունից ԴՏ-ների տարածման դեմ ուղղված պետական հաստատությունների գործողությունները կարող են արդարացվել առաջին հերթին այն դեպքում, երբ հիմնավորվի ԴՏ-ների հասարակական կամ քաղաքական տեսանկյունից «վտանգավորությունը»։ Այս համատեքստում հարկ է նկատել, որ ոչ բոլոր ԴՏ-ներն են «վտանգավոր»։ ԴՏ-ների վտանգավորությունը պարզելու համար տեսաբանները հաճախ տե-

---

[8] Տե՛ս **Popper K. R.**, The Open Society and Its Enemies. 5th ed., Vol. 2, Routledge and Kegan Paul, Oxford, 1969, էջ 123։

[9] Տե՛ս ՀՀ օրենքը խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=82, հղումը հասանելի է 05.04.2022։

սակավորում են դրանք: ԴՏ-ների տեսակավորման հիմքում որոշ դեպքերում ընկած է մեկնաբանվող իրադարձության ընդգրկունությունը: Այս պարագայում մասնագիտական գրականությունում առանձնացվում են գլոբալ (համաշխարհային), ռեգիոնալ (տարածաշրջանային) և լոկալ (տեղային) ԴՏ-ներ[10]: Գլոբալ ԴՏ-ները վերաբերում են այնպիսի իրադարձությունների մեկնաբանությանը, որոնք համաշխարհային նշանակություն և տարածում ունեն, ռեգիոնալ ԴՏ-ները մեկնաբանում են տարածաշրջանային նշանակություն ունեցող իրադարձությունները, իսկ լոկալ ԴՏ-ները վերաբերում են միայն տվյալ հասարակության կամ տվյալ պետության ներսում տեղի ունեցած կամ ունեցող քաղաքական իրադարձությանը:

ԴՏ-ների մեկ այլ տեսակավորման հիմքում ընկած է այն հատկանիշը, թե տվյալ սոցիալ-քաղաքական իրադարձությունը մեկնաբանվում է մեկ ամբողջական կամ համապարփակ դավադրությամբ, թե՞ ամեն մի սոցիալ-քաղաքական որոշակի իրադարձության հիմքում ընկած է մեկ առանձին դավադրություն: Ըստ այդմ՝ ֆինլանդացի տեսաբան Յ. Ռաիկան կարծում է, որ ԴՏ-ներն իրենց հերթին լինում են համապարփակ և քաղաքական (այսուհետ՝ համապատասխանաբար՝ ՀԴՏ և ՔԴՏ)[11]: ՀԴՏ-ները սոցիալ-քաղաքական իրականությունը նկարագրող այնպիսի տեսություններ են, որոնք տարածաշրջանային և տեղային սոցիալ-քաղաքական իրադարձությունները մեկնաբանում են այսպես կոչված մեգաԴՏ-ի շրջանակներում[12]: Այսինքն՝ տեղային կամ տարածաշրջանային սոցիալ-քաղաքական ցանկացած իրողություն ՀԴՏ-ն մեկնաբանում է համաշխարհային համապարփակ դավադրության համատեքստում: Օրինակ՝ «Մասոնների համաշխարհային կառավարության», «Ռեպտիլոիդների թաքնված իշխանության» և նման այլ ԴՏ-ները կարելի է դասել ՀԴՏ-ների շարքին: «Ռեպտիլոիդների թաքնված իշխանության» ՀԴՏ-ի համաձայն՝ հազարավոր տարիներ առաջ Երկիր մոլորակ է ժամանել ռեպտիլոիդների մի խումբ, որը, մարդկային տեսք ստանալով, գաղտնաբար իշխում է մարդկության վրա, և իշխանական բոլոր էլիտաները ոչ թե մարդիկ են, այլ մարդակերպ ռեպտիլոիդներ[13]: «Ռեպտիլոիդների իշխանության» ԴՏ-ն, որքան էլ տարօրինակ թվա, բայց բավականին տարածված ԴՏ-ներից է, որին հավատում են քաղաքական տարբեր հայացքներ ունեցող մարդիկ: Այս համատեքստում ՀԴՏ-ները նման են կրոնական տեսություններին, քանի որ առաջար-

---

[10] Տե՛ս **Räikkä J.**, On Political Conspiracy Theories. The Journal of Political Philosophy: Volume 17, Number 2, 2009, էջ 186:

[11] Տե՛ս **Räikkä J.**, The Ethics of Conspiracy Theorizing. Springer Science + Business Media B.V., 2009, էջ 458-460:

[12] Տե՛ս **Barkun M.**, A Culture of Conspiracy: Apocalyptic Visions in Contemporary America. University of California Press, Berkeley, 2003, էջ 6:

[13] Տե՛ս **Tyson L., Kahn R.,** The Reptoid Hypothesis: Utopian and Dystopian Representational Motifs in David Icke's Alien Conspiracy Theory. Utopian Studies, Vol. 16(1), 2005, էջ 45:

կում են իրականության մեկնաբանության համապարփակ մի տեսություն, որից ամենևին էլ քաղաքական-փիլիսոփայական խնդրակարգին առնչվող կարգաստեղծ պնդումներ չեն բխում: Ուստի ՀԴՏ-ները քաղաքական առումով անտարբեր տեսություններ են և սկզբունքորեն չեն սպասարկում ո՛չ աջական, ո՛չ ձախական, ո՛չ ժողովրդավարական, ո՛չ ավտորիտար, ո՛չ առաջադիմական, ո՛չ պահպանողական և ո՛չ այլ քաղաքական օրակարգերի:

Այլ են պայմանները, երբ գործ ունենք ՔԴՏ-ների հետ (քաղաքական դավադրապաշտական տեսություն): ՔԴՏ-ները նույնպես սոցիալ-քաղաքական իրադարձությունները մեկնաբանող տեսություններ են, որոնք տվյալ իրադարձությունը մեկնաբանում են քաղաքական որոշակի ուղղվածություն ունեցող որևէ ուժի քաղաքական-գաղափարախոսական օրակարգը սպասարկելու համատեքստում: Ըստ էության ՔԴՏ-ները ԴՏ-ներ են, որոնք ունեն քաղաքական ուղղվածություն: Այստեղ տեղին է հիշել բրիտանացի տեսաբան Ք. Քասսամին, որը ԴՏ-ների որոշիչ բաղադրիչներից առանձնացնում է այն, որ ԴՏ-ները սպասարկում են քաղաքականության կամ քաղաքական գաղափարախոսության որոշակի օրակարգի քարոզչությունը[14]: Ըստ այդմ՝ Քասսամն առանձնացնում է աջական և ձախական ԴՏ-ները, որոնցից աջականները սպասարկում են ընդհանուր առմամբ պահպանողական, ազգայնական ուղղվածություն ունեցող քաղաքական օրակարգերը, ինչպիսիք են հակասեմիտական, հակագլոբալիստական, հակապատվաստումային ԴՏ-ները, իսկ ձախականները սպասարկում են առաջադիմական, աշխարհաքաղաքացիական ուղղվածությամբ քաղաքական օրակարգերը, ինչպիսիք են հակակապիտալիստական, հակաամերիկյան և այլ ԴՏ-ները[15]: Սակայն պետք է նկատել, որ քաղաքական ուղղվածության բաղադրիչը վերաբերում է ոչ բոլոր ԴՏ-ներին, քանի որ ոչ բոլորն են սպասարկում քաղաքական որևէ օրակարգի կամ գաղափարախոսության քարոզչությունը, ինչպես օրինակ՝ ՀԴՏ-ները:

Ընդհանուր առմամբ՝ ՀԴՏ-ները վտանգավոր չեն այնքանով, որքանով վտանգավոր չեն կրոնական տեսությունները: Երկու դեպքում էլ գործ ունենք տեսության իմացաբանական թերարժեքության հետ, երկու դեպքում էլ իրականությանը տեսության համապատասխանությունը հիմնված է զուտ հավատի վրա, երկու դեպքն էլ, սակայն, քաղաքական որևէ հստակ օրակարգ չեն առաջադրում կամ սպասարկում: Իհարկե, և՛ ՀԴՏ-ները, և՛ կրոնական ուսմունքները կարող են ծառայել այս կամ այն քաղաքական ուժի գաղափարախոսական քարոզչության սպասարկմանը, սակայն դա անհրաժեշտաբար չի ենթադրվում: Մինչդեռ նույնը չի կարելի պնդել ՔԴՏ-ների մասին:

ՔԴՏ-ները, ունենալով քաղաքական ուղղվածություն, հաճախ հա-

---

[14] Տե՛ս **Cassam Q.,** նշվ. աշխ., էջ 6:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 6-8:

կաղրվում են սոցիալ-քաղաքական իրադարձության վերաբերյալ «պաշտոնական դիրքորոշմանը» կամ «պաշտոնական նարատիվին»: Այդ կերպ ՔԴՏ-ներում արտահայտված է քաղաքացիական, գիտական, տեղեկատվական, կրոնական և տնտեսական հաստատությունների նկատմամբ անվստահությունը[16]: Իհարկե, ՔԴՏ-ների՝ սոցիալ-քաղաքական իրադարձության մասին «պաշտոնական վարկածի» նկատմամբ հակադրվողականությունը ժողովրդավարական հասարակություններում ինքնին բավարար հիմք չէ դրանց տարածման դեմ պետական քաղաքականություն մշակելու բարոյագիտական հիմնավորման համար: Որոշ տեսաբաններ կարծում են, որ ՔԴՏ-ները քաղաքական տեսանկյունից որոշակի դրական գործառույթներ, այնուամենայնիվ, կատարում են, օրինակ՝ նպաստում են սոցիալ-քաղաքական իրադարձությունները մեկնաբանող տեսությունների կատարելագործմանը կամ իշխանությունների գործողությունների թափանցիկացմանը և հասարակության հետ երկխոսության հաստատմանը[17]: Բանն այն է, որ ՔԴՏ-ների՝ «պաշտոնական տեսակետի» նկատմամբ հակադրվողական տեսակետի տարածումը կարող է հասարակության ուշադրությունը հրավիրել իշխանությունների գործողությունների ինչ-ինչ թերացումների և բացերի վրա: Այս համատեքստում պետք է նշել, որ ժողովրդավարության պայմաններում հասարակական տրամադրությունները կարևորող իշխանությունների համար կարևոր է նաև հաշվետվողական քաղաքականության իրականացումը: ՔԴՏ-ների տարածման հետևանքով իշխանությունները պարզապես ստիպված են հակադարձել իրենց ազնվությունը կասկածի տակ դնող ՔԴՏ-ներին, ինչի շնորհիվ սոցիալ-քաղաքական որևէ իրադարձության «պաշտոնական մեկնաբանությունը» ավելի է հղկվում, ուստիև ավելանում են վերջինիս բացատրական ներուժը և հասարակության հետ իշխանությունների երկխոսության հաստատման հնարավորությունը: Այս պարագայում դավադրապաշտական մտածողությունը կարծես «լինելիության իրավունք» է ստանում: Առավել ևս, որ «պաշտոնական վարկածին» հակադրվող տեսակետները կարող են նաև հիմնավոր լինել և իմացաբանական տեսանկյունից թերարժեք չլինել: Տեղին է նկատել, որ սովորաբար այն հասարակություններում, որտեղ «պաշտոնական վարկածին» հակադրվող բոլոր տեսակետները լռեցվում և կանխվում են, տիրում են ավտորիտար կամ բռնապետական քաղաքական կարգեր: Ուստի ևս մեկ անգամ պնդենք, որ ժողովրդավարության պայմաններում տեսության իմացաբանական թերարժեքությունը բավարար հիմք չէ ԴՏ-ների կանխմանն ուղղված քաղաքականություն մշակելու բարոյագիտական

[16] Տե՛ս **Harambam J.**, Contemporary Conspiracy Culture: Truth and Knowledge in an Era of Epistemic Instability. Routledge, New York, 2020, էջ 207:

[17] Տե՛ս **Clarke S.**, Conspiracy Theories and Conspiracy Theorizing. Philosophy of the Social Sciences, Vol. 32, 2002, էջ 148:

հիմնավորման համար: Մինչդեռ խնդիրը ՔԴՏ-ների բարոյական տեսանկյունից թերարժեքությունն է կամ այլ կերպ՝ յուրաքանչյուր կոնկրետ ԴՏ-ի հիմքում ընկած բարոյական կարգաստեղծ սկզբունքների բովանդակությունը[18]: Այս մոտեցումը կարելի է պայմանականորեն կոչել «բարոյագիտական մոտեցում»:

Ըստ «բարոյագիտական մոտեցման»՝ «կեղծ տեղեկատվության» և ԴՏ-ների դեմ հանրային քաղաքականությունը պետք է թիրախավորի ոչ թե ընդհանրապես ԴՏ-ների, տվյալ դեպքում ՔԴՏ-ների իմացաբանական թերարժեքությունը և «պաշտոնական տեսակետին» հակադրվողականությունը, այլ պետք է կենտրոնանա ՔԴՏ-ների գաղափարական բաղադրիչների բարոյական խնդիրների վրա, քանի որ ՔԴՏ-ների «վտանգավորությունը» պայմանավորված է ոչ թե կամ ոչ այնքան իմացաբանական թերարժեքությամբ կամ իմացաբանական ապաբանականությամբ, որքան բարոյական թերարժեքությամբ կամ բարոյական ապաբանականությամբ: Ազատական-ժողովրդավարական քաղաքական կազմակերպում ունեցող հասարակությունների սոցիոմշակութային արժեքների համատեքստում ապաբանական է համարվում սոցիալ-քաղաքական իրականության նկատմամբ այն մոտեցումը, որի հիմքում ընկած է հետևյալ պնդումներից գոնե մեկի ժխտումը.

Ա) քաղաքական հասարակությունը փոխշահավետության առումով պետք է լինի սոցիալական համագործակցության արդար համակարգ,

Բ) քաղաքացիները պետք է լինեն ազատ և հավասար,

Գ) պետք է հաստատվի ողջախոհ բազմակարծություն[19]:

Շարունակելով «բարոյական ապաբանականության» ներկայացված սահմանման տրամաբանությունը՝ կարելի է պնդել, որ բարոյական տեսանկյունից ապաբանական են բոլոր այն տեսությունները, որոնց բովանդակությունում առկա է տվյալ կետերից գոնե մեկի բացառումը: Ակնհայտ է, որ տեսության «բարոյական ապաբանականությունը» խոսում է տեսության բարոյական թերարժեքության մասին, իսկ տեսության բարոյական թերարժեքությունից բխում է տեսության քաղաքական վտանգավորությունը, այն է՝ տեսության քաղաքական թերարժեքությունը, ուստի ժողովրդավարական պետությունը կամ պետական հաստատությունները «բարոյական իրավունք» ունեն միջամտելու բոլոր այն տեսությունների տարածմանը, որոնք բավարարում են տեսության «բարոյական թերարժեքության» նշված սկզբունքները: Ասվածն առաջին հերթին կարելի է պնդել ՔԴՏ-ների առնչությամբ: ՔԴՏ-ն ժողովրդավարության պայմաններում բարոյական տեսանկյունից թե-

---

[18] Առավել մանրամասն տե՛ս **Cibik M., Hardos P.,** Conspiracy Theories and Reasonable Pluralism. European Journal of Political Theory, London, 2020, էջ 1-21:

[19] Տե՛ս **Quong J**., The rights of unreasonable citizens. Journal of Poilitical Philosophy, 12 (3), Edgbaston, 2004, էջ 315:

բարժեք է այն դեպքում, երբ մերժում է բազմակարծության, քաղաքացիների հավասարության և ազատության, քաղաքական հասարակության՝ որպես արդար համակարգի լինելիության կարգաստեղծ արժեքները: Եթե ՔԴՏ-ի հիմքում կա որևէ պնդում, ըստ որի հասարակական այս կամ այն շերտը ավելի կամ պակաս արժեքավոր է կամ պետք է լինի, ավելի կամ պակաս ազատ է կամ պետք է լինի, հասարակության քաղաքական կազմակերպման հիմքում ընկած չէ կամ չպետք է ընկած լինի հասարակության բոլոր անդամների շահերի արդար սպասարկումը, ապա տվյալ ՔԴՏ-ն բարոյական տեսանկյունից ապաբանական և թերարժեք է, ուստիև քաղաքական տեսանկյունից «վտանգավոր է», հետևաբար վերջինիս տարածումը կարող է և պետք է կանխվի ժողովրդավարական պետության կողմից:

Որպեսզի նշված մոտեցումը լինի ավելի առարկայական, դիտարկենք հետխորհրդային տարածքում առավել արդիական ՔԴՏ-ներից մեկի օրինակը, որը վերաբերում է այսպես կոչված «գունավոր հեղափոխություններին»: «Գունավոր հեղափոխությունների» ՔԴՏ-ի ծագումը և էվոլյուցիան հետխորհրդային տարածքում հանգամանալից վերլուծել է ռուս պատմաբան Ի. Յաբլոկովը: Ըստ նրա՝ «գունավոր հեղափոխությունների» ՔԴՏ-ն ներկայացնում է սոցիալ-քաղաքական իրողությունների այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ յուրաքանչյուր հակահիշխանական զանգվածային բողոքի կամ ընդվզման գործողություն ներկայացվում է որպես «հավաքական Արևմուտքից» հովանավորվող և ուղղորդվող քաղաքական գործընթաց, որի նպատակը տվյալ պետությունը կազմաքանդելն է[20]: Այս ՔԴՏ-ն օրինաչափորեն տարածված է բոլոր հետխորհրդային պետություններում, այդ թվում նաև ՀՀ-ում (քանի որ հայաստանյան հասարակությունն էլ հետխորհրդային հասարակության մաս է, և տեղեկատվության, քարոզչության լեզվի ընդհանրությունն ու կրթական և մեդիա հարթակներով տարածվող գաղափարաբանությունները առկա են նաև հայաստանյան հասարակությունում): «Գունավոր հեղափոխությունների» ՔԴՏ-ն բարոյական թերարժեքության ներկայացված սահմանման համատեքստում կարելի է դիտարկել ապաբանական տեսություն, քանի որ ի սկզբանե քաղաքացիների արդարացի բողոքի և ընդվզման փորձերը ներկայացնում է որպես օտար պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից ուղղորդվող կամ կազմակերպված քաղաքական գործընթաց, ինչով կասկածի տակ է դրվում քաղաքացիների արդարացիորեն բողոքելու իրավունքը: Այսինքն՝ սկզբունքորեն քաղաքացիները չեն կարող բողոքել անարդար սոցիալական կարգերից, քանի որ կա՛մ չունեն ազատ մտածելու և որոշումներ կայացնելու հնարավորություն (ինչը բավարարում է «Բ» կետը), կա՛մ իրավունք չունեն ունենալու կամ

[20] Տե՛ս **Yablokov I.**, Fortress Russia, Conspiracy Theories in Post-Soviet Russia. Polity Press, Cambridge, 2018, էջ 132-161:

արտահայտելու գործող կարգերի նկատմամբ այլընտրանքային տեսակետ (ինչը բավարարում է «Գ» կետը), կա՛մ էլ սկզբունքորեն քաղաքական հասարակությունը քաղաքացիների շահը սպասարկող «արդար համակարգ» չէ և չի կարող լինել (ինչը բավարարում է «Ա» կետը), ուստի քաղաքացիների՝ իրենց շահերն արդար սպասարկելու վերաբերյալ քաղաքական իշխանություններից սպասելիքներն արդարացված չեն։ «Գունավոր հեղափոխությունների» ՔԴՏ-ի բովանդակային ծանրաբեռնվածությունը ցույց է տալիս վերջինիս «բարոյական թերարժեքությունը», ուստի ժողովրդավարական պետությունը կարող է համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ ՔԴՏ-ի տարածումը կանխելու համար։

Իհարկե «գունավոր հեղափոխությունների» ՔԴՏ-ն հետխորհրդային հասարակություններում միակը չէ։ Ի. Յաբլոկովը ներկայացնում է նաև այլ ՔԴՏ-ներ, ինչպես օրինակ՝ «սուվերեն ժողովրդավարության», «ամրոց Ռուսաստանի», «թշնամական երևակայական Արևմուտքի» ՔԴՏ-ները, որոնք հետխորհրդային շրջանում ռուսական քաղաքական կյանքի լուսանցքից տարիների ընթացքում հայտնվել են քաղաքականության ձևավորման, քաղաքական որոշումների կայացման առանցքում[21], ինչը ինչ-որ առումով հասկանալի երևույթ է, քանի որ ՔԴՏ-ների «բարոյական ապաբանականությունը» տեսանելի է առաջին հերթին ժողովրդավարական քաղաքական կազմակերպում ունեցող պետությունների համատեքստում, մինչդեռ ավտորիտար հատկություններ ունեցող քաղաքական համակարգերում ՔԴՏ-ների իմաստային բովանդակությունը կարող է ոչ միայն ողջախոհ թվալ ավտորիտար քաղաքական էլիտաների համար, այլև նույնիսկ ինչ-որ առումով դառնալ ավտորիտար իշխանության լեգիտիմության աղբյուր։ Ուստի այն դեպքերում, երբ ՔԴՏ-ների տրամաբանությամբ սկսվում է ձևավորվել պետական քաղաքականության առանցքը, դավադրապաշտության տարածման կանխարգելումը պետական խնդրից վերածվում է արդեն հասարակականի, քանի որ այն կարող է լինել հասարակությունում ավտորիտար կարգերի հաստատման ցուցիչ։

Եվ այսպես՝ ՔԴՏ-ների տարածումը կարող է սպառնալ հասարակության՝ ժողովրդավարության սկզբունքներով կազմակերպմանը ոչ թե այն պատճառով, որ ՔԴՏ-ները իմացաբանորեն թերարժեք տեսություններ են, այլ այն, որ դրանք հիմնականում հիմնվում են այնպիսի կարգաստեղծ սկզբունքների վրա, որոնք հակասում են ժողովրդավարական հասարակությունների կարգաստեղծ արժեքներին (արդարություն, հավասարություն, ազատություն և այլն)։ Ժողովրդավարական քաղաքական կազմակերպում ունեցող պետությունները ժողովրդավարության պաշտպանության համար կարող են և պետք է հակազդեն բա-

[21] Տե՛ս **Яблоков И**. Русская культура заговора, конспирологические теории на постсоветском пространстве. М., АИФ, 2021, էջ 323-335։

րոյական տեսանկյունից թերարժեք ՔԴՏ-ների տարածմանը, քանի որ դա կարող է հասարակությունում ավտորիտար կարգերի հաստատման ծիլեր արձակել: Հակազդման մեխանիզմները կարող են ընդգրկել ինչպես օրենսդրական, այնպես էլ կրթական մակարդակները: Սակայն մասնավորապես կրթական մակարդակի թիրախում պետք է լինեն ոչ թե կամ ոչ միայն ՔԴՏ-ների իմացաբանական թերարժեքության բացահայտումը և կազմաքանդումը, ինչը հնարավոր է անել կրթական և այլ հաստատությունների միջոցով քննական մտածողությունը և մեդիագրագիտությունը զարգացնելը խրախուսելու միջոցով, այլև, առաջին հերթին, ՔԴՏ-ների բարոյական թերարժեքությունը: Տեղին է նշել, որ որոշ հետազոտությունների համաձայն՝ վերլուծական մտածողության առկայությունը միայն կարճաժամկետ հատվածում է նվազեցնում ԴՏ-ների տարածման հնարավորությունը[22], սակայն երկարաժամկետ հատվածում ԴՏ-ների կանխարգելումը կարող է պայմանավորվել միայն բարոյական որոշակի արժեհամակարգի սերմանմամբ: Հարկ է նկատել, որ ժողովրդավարական քաղաքական կազմակերպում ունեցող հասարակություններում պետությունը կրթական համակարգի միջոցով կարող է խթանել քննական, վերլուծական մտածողությունը, սակայն անգամ այդ դեպքում հասարակությունն ապահովված չէ երկարաժամկետ հատվածում ԴՏ-ների, ավելի կոնկրետ՝ ՔԴՏ-ների տարածումից, ուստի շեշտը պետք է դրվի ոչ միայն և ոչ այնքան քննական մտածողության զարգացման, որքան հասարակության բարոյական դաստիարակության վրա, որի առանցքը ժողովրդավարական հասարակություններում պետք է լինի այլակարծության, մարդասիրության, երկխոսության, ազատ կամարտահայտման նկատմամբ հարգանքի վրա ձևավորված արժեհամակարգը:

ЛЕВОН БАБАДЖАНЯН – *Этические проблемы политических конспирологических теорий*. – Конспирологические теории справедливо имеют негативную коннотацию. Считается, что эпистемологическая дефективность конспирологических теорий искажает адекватное представление о социо-политической реальности. Однако, эпистемологическая дефективность в демократических обществах не может являться достаточным этическим аргументом для предотвращения распространения таких теорий, потому что в таком случае нужно было бы предотвратить распространение других дефективных теорий тоже (например религиозных учений и др.). В то же время, в основном считается, что распространение политических теорий заговора угрожает демократическим обществам, поскольку они снижают общий уровень доверия между членами общества, доверия к правительству и государственным институтам. Таким образом, мы нуждаемся в другом разумном аргументе для предотвращения распространения политических конспирологических теории. В статье предполагается, что в основном аргументы этической неприемлемости политических конспирологических теории и их угрозы демократическим принципам организации общества могут быть разумными

[22] Տե՛ս **Swami V., Voracek M., Stieger St., Tran U.S., Furnham A.,** Analytic thinking reduces belief in conspiracy theories. Cognition 133, 2014, էջ 582:

аргументами для предотвращения таких теорий. Таким образом, именно этическая дефективность политических конспирологических теорий заговора дает государству и обществу “моральное право” для разработки и применения политики предотвращения их распространения.

Ключевые слова: *конспирологические теорий, политические конспирологические теорий, тотальные конспирологические теорий, демократия, эпистемологическая дефективность, этическая дефективность*

LEVON BABAJANYAN – ***The Ethical Issues of Political Conspiracy Theories***. – Conspiracy theories have a reasonably bad connotation. It is believed, that the epistemological deficiency of conspiracy theories spoils the adequate perception of social-political reality. However, in democratic societies, the epistemological deficiency of any theory couldn’t be considered a sufficient ethical argument for rebutting the spread of such theories, as in that case it would be obligatory to prevent the spread of the other epistemologically deficient theories (such as religious theories etc.). At the same time, it is mostly accepted, that the spread of political conspiracy theories threatens democratic societies, as they decrease the overall level of trust between the members of the society, the trust in government and state institutions. Thus, a reasonable argument is needed for the prevention the spread of political conspiracy theories. The article suggests that mainly the ethical unacceptability of political conspiracy theories and their threats to the democratic tenets of the organization of society could be a reasonable argument for rebutting conspiracy theories. Thus, mostly the ethical deficiency of political conspiracy theories gives a “moral right” to the state and the society for the elaboration and actualization of the prevention policy of their spread.

Key words: *Conspiracy Theories, Political Conspiracy Theories, Total Conspiracy Theories, Democracy, Epistemological deficiency, Ethical deficiency*